ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ատենախոսությունը պետք է ունենա հետևյալ բաղադրիչ մասերը՝ սահմանված ձևի տիտղոսաթերթ (<<Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգ>> հավելված 6), բովանդակություն, առաջաբան կամ ներածություն՝ ներառելով ատենախոսության հիմնական դրույթները, տեքստ՝ առանձին գլուխներով, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ, անհրաժեշտության դեպքում՝ գիտագործնական երաշխավորություններ կամ առաջարկներ, հավելված, նշանակումների, հապավումների, միավորների և տերմինների ցանկ:

Ատենախոսությունը տպագրվում է A4 (210x297 մմ) չափի թղթի մի կողմի վրա, համակարգչով (Microsoft Word ծրագրով, Unicode, հայերենը՝ GHEA Grapalat տառատեսակ), այնպես, որ էջում լինի 28-30 տող: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ:

Ատենախոսության գլուխների անվանումները պետք է լինեն մեծատառերով և սկսվեն նոր էջից:

Ատենախոսության բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, հավելվածը և այլն, համարակալվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, որի վրա համարը չի դրվում:

Ատենախոսության յուրաքանչյուր օրինակի տիտղոսաթերթին հայցորդը ստորագրում է:

Թեկնածուական ատենախոսության համար ընդունելի է 100-150 էջ, իսկ դոկտորական ատենախոսության համար՝ 200-300 էջ ծավալը՝ առանց հավելվածների: Հասարակական գիտությունների համար նշված ծավալները կարող են ավելանալ 30 %-ի չափով, որոշ տեսական բնույթի ատենախոսություններ, խորհրդի միջնորդությամբ և ԲՈՀ-ի համաձայնությամբ, կարող են ունենալ ավելի փոքր ծավալ:

Առաջաբանը կարող է լինել 5-15 էջերի սահմաններում:

Աղյուսակների, նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները տրվում են ներքևում կամ վերևում: Դրանք կարելի է տեղադրել ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով: Եթե մեկ թերթի վրա աղյուսակը չի տեղավորվում, պետք է շարունակել մյուս թերթի վրա՝ նշելով, որ շարունակությունն է: Աղյուսակի սյունակներում ազատ տեղեր չպետք է մնան. պետք է դնել գծիկ կամ գրել <<չկա>> (<<չի որոշված>>):

Գրականության ցանկը կարելի է ներկայացնել կամ այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, կամ համարակալված ըստ ատենախոսության մասերի հղումների: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների/ ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները /տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը/: Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի,

հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները:

Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով:

Ատենախոսության էջերում ուղղումներ չեն թույլատրվում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Հիմնարկի անվանումը, որտեղ հաստատվել է
ատենախոսության թեման

Ազգանուն, անուն, հայրանուն
Ատենախոսության անվանումը

Ատենախոսություն

_____ մասնագիտությամբ
_____ գիտությունների
դոկտորի (թեկնածուի) գիտական
աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

քաղաք-տարեթիվ